

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N «ՀՈՀ-ՄԱԾՁԲ-25/11»**

ք. Երևան

«07» փետրվարի 2025թ.

«Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով»-ը, ի դեմս գլխավոր քարտուղար Սմբատ Խաչատրյանի, որը գործում է հանձնաժողովի կանոնադրության հիման վրա՝ (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Էմմա Մկրտչյան ԱԶ-ն, ի դեմս Էմմա Մկրտչյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 (երկու) օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **5 (հինգ)** աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **446 000 (չորս հարյուր քառասունվեց հազար) ՀՀ դրամ:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4.3 Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝  $V = V_0 / (1 + X \cdot T)$ , որտեղ՝

V-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

V<sub>0</sub>-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

X-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

T-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

P-ն մատուցված ծառայության քանակն է:

## **5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

## **6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## **7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության

օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:<sup>1</sup>

7.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:<sup>2</sup>

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկներ կայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ

<sup>1</sup> Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:

<sup>2</sup> Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:

կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է **5 (հինգ)** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Հեռուստատեսության և ռադիոյի  
հանձնաժողով  
ք. Երևան, Իսահակյան 28  
ՀՀ ՖՆ գործառական վարչություն  
Հ/Ը 900011057016  
ՀՎՀՀ 02556422

### Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

Էմմա Մկրտչյան ԱԶ  
ք. Երևան, Թաիրով ի 46/101  
« Ամերիաբանկ » ՓԲԸ  
Հ/Ը 1570086061860200  
ՀՎՀՀ 35123162



(ստորագրություն)

Կ.Տ.

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\***

Ծառայության								
հրավերով նախատեսված չափաքանի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	մատուցման		
						հասցեն	Ժամկետը**	
1	50111130/1	<p>Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովին պատկանող տրանսպորտային միջոցների՝ Տոյոտա Կորոլա 1.3 և Տոյոտա Կորոլա 1.6 ավտոմեքենաների 2025 թվականի (SU-1, SU-2) տեխնիկական գնում և սպասարկում</p> <p>--Ծառայությունները պետք է մատուցվեն Երևան քաղաքում:</p> <p>--Կատարողը պարտավոր է Պատվիրատուի պահանջով տրամադրել տեղեկանք՝ Պատվիրատուի տրանսպորտային միջոցը Կատարողի տեխսպասարկման կայան ներկայացնելու օրվա և ժամի մասին:</p> <p>--Ծառայությունները պետք է մատուցվեն Պատվիրատուի տրանսպորտային միջոցը Կատարողի տեխսպասարկման կայանում գրանցվելու օրվանից հաշված առնվազն երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ առանց պահեստամասի փոխարինման ծառայության դեպքում և հինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ պահեստամասի փոխարինումով ծառայության դեպքում: Առանձին դեպքերում՝ Պատվիրատուի համաձայնությամբ, կարող է սահմանվել ծառայության մատուցման այլ ժամկետ:</p> <p>--Կատարողը պարտավոր է SU-2-ի ժամանակ օգտագործել տվյալ ավտոմեքենայի արտադրող ընկերության կողմից արտադրված կամ նրա կողմից երաշխավորված պահեստամասեր և քայլուղի: Ավտոպահեստամասերը պետք է լինեն նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ:</p> <p>--Նորոգված հանգույցի 6 ամսվա երաշխիք:</p> <p>-- Ծառայությունները մատուցվելու են ըստ պատվիրատուի պահանջի:</p> <p>Ծառայություններն իրականացվում են ըստ կից ներկայացվող գնացուցակում ընտրված մասնակցի առաջարկած գնի:</p>	դրամ	446000	1	Ծառայությունները պետք է մատուցվեն Կատարողի տեխսպասարկման կայանում	Ծառայությունների մատուցման ժամկետ է սահմանվում սույն պայմանագրի ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառվելու օրվանից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 30 ը	

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Հեռուստատեսության և ռադիոյի  
հանձնաժողով  
ք. Երևան, Իսահակյան 28  
ՀՀ ՖՆ գործառական վարչություն  
Հ/Հ 900011057016  
ՀՎՀՀ 02556422



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

Էմմա Մկրտչյան ԱԶ  
ք. Երևան, Թաիրով ի 46/101  
« Ամերիաբանկ » ՓԲԸ  
Հ/Հ 1570086061860200  
ՀՎՀՀ 35123162

(ստորագրություն)

Կ.Տ.

**ԱՎՏՈՄԵԲԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈՎՄԱՆ  
 ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ  
 ԳՆԱՑՈՒՑԱԿ**

<b>Գնման առարկա է հանդիսանում Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովին պատկանող տրանսպորտային միջոցների 2025թ. տեխնիկական սպասարկման SU-1 և SU-2 ծառայությունների մատուցումը՝ այդ թվում՝</b>		
<b>Հ/Հ</b>	<b>Սպասարկվող մեքենայի մակնիշը</b>	<b>Քանակը</b>
	Տոյոտա Կորոլա	2 մեքենա

NN	SU-1, SU-2 ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները Այլ պետությունների արտադրության մեքենաներ	5-տեղ. մարդատար առջևի տանող ա/մ Տոյոտա Կորոլա1.3	5-տեղ. մարդատար առջևի տանող ա/մ Տոյոտա Կորոլա1.6
1	2	4	5
<b>SU-1 ներառվող ծառայությունների անվանում</b>			
1	Բռնկման համակարգի ստուգում	2,000	2,000
2	Սառեցման համակարգի ստուգում	2,000	2,000
3	Յուղման համակարգի ստուգում	2,000	2,000
4	Արտացման համակարգի ստուգում	2,000	2,000
5	Կցորդման համակարգի ստուգում	2,000	2,000
6	ՓՏ-ի աշխատանքի ստուգում	2,000	2,000
7	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	2,000	2,000
8	Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում	2,000	2,000
9	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	2,000	2,000
10	Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում	2,000	2,000
11	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	2,000	2,000
12	Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում	2,000	2,000
13	ABS համակարգի ստուգում	2,000	2,000
14	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	2,000	2,000
15	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	2,000	2,000
16	Թափքի վիճակի ստուգում	2,000	2,000
17	Տարբեր ազդեցատների յուղերի որակի և մակարդակների ստուգում	2,000	2,000
<b>SU-2 ներառվող ծառայությունների անվանումը</b>			
<b>1. Շարժիչ</b>			
18	Շարժիչի հանում և տեղադրում	50,000	50,000
19	Նույնը DOHC (2 բաշխիչ լիսեռ) դեպքում	50,000	50,000
20	Նույնը կոնդիցիոների դեպքում	50,000	50,000
21	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	50,000	50,000
22	Շարժիչի մասնակի ստուգում	18,000	18,000
23	Շարժիչի վերանորոգում	150,000	150,000
24	Նույնը DOHC դեպքում	150,000	150,000
25	Նույնը V6-ի դեպքում	150,000	150,000
26	Շարժիչի բարձրիկի հանում և տեղադրում	5,000	5,000

27	Բլոկի հղկում	27,000	27,000
28	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում	9,000	9,000
29	Նույնը աջի համար (V6)	9,000	9,000
30	Նույնը ձախի համար (V6)	9,000	9,000
31	Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում	54,000	54,000
32	Նույնը աջի համար (V6)	54,000	54,000
33	Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում	54,000	54,000
34	Շարժիչի գլխիկի վերանորոգում	54,000	54,000
35	Փակամի խցուկի փոխարինում	18,000	18,000
36	Նույնը V6-ի դեպքում	18,000	18,000
37	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում	9,000	9,000
38	Նույնը V6-ի ձախի դեպքում	9,000	9,000
39	Նույնը V6-ի աջի դեպքում	9,000	9,000
40	Նույնը DOHC դեպքում	9,000	9,000
41	Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում	9,000	9,000
42	Հրիչների փոխարինում SOHC	9,000	9,000
43	Նույնը DOHC դեպքում	9,000	9,000
44	Ատամնավոր փոկի փոխարինում	27,000	27,000
45	Նույնը DOHC դեպքում	27,000	27,000
46	Նույնը V6-ի դեպքում	27,000	27,000
47	Ծնկածև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	9,000	9,000
48	Նույնը կոնդիցիոների դեպքում	9,000	9,000
49	Նույնը DOHC դեպքում	9,000	9,000
50	Նույնը կոնդիցիոների դեպքում	9,000	9,000
51	Նույնը V6-ի դեպքում	9,000	9,000
52	Նույնը կոնդիցիոների դեպքում	9,000	9,000
53	Ծնկածև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	36,000	36,000
54	Նույնը UFS-ի դեպքում	36,000	36,000
55	Մխոցային օդակների փոխարինում	36,000	36,000
56	Նույնը DOHC դեպքում	36,000	36,000
57	Նույնը V6-ի դեպքում	36,000	36,000
58	Թափանիվի հանում և տեղադրում	36,000	36,000
59	Թափանիվի պսակի փոխարինում	36,000	36,000
60	Խցիկի զտիչի փոխարինում	2,700	2,700
	<b>2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ</b>		
61	Յուղի և յուղի զտիչի փոխարինում	18,000	18,000
62	Յուղի պոմպի փոխարինում	10,800	10,800
63	Նույնը DOHC դեպքում	10,800	10,800
64	Նույնը V6-ի դեպքում	10,800	10,800
65	Համակարգչային ախտորոշում	6,000	6,000
66	Ղեկավարման բլոկի վերանորոգում	22,500	22,500
67	Բռնկման կարգավորում	5,400	5,400
68	Պարապ ընթացքի կարգավորում	5,400	5,400
69	CO կարգավորում	5,400	5,400
70	խարնարակի հանում և տեղադրում	0	0
71	խարնարակի վերանորոգում	0	0
72	Օդի զտիչի փոխարինում	6,000	6,000
73	Կոնդիցիոների զտիչի փոխարինում	6,000	6,000
74	Ինժեկտորի ֆորսունկաների փոխարինում	900	900
75	Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում	7,200	7,200
76	Բենզամղիչի փոխարինում	5,000	5,000
77	Բենզոբաքի բենզամղիչի ցանցի մաքրում	7,200	7,200
78	Վառելիքի զտիչի փոխարինում	5,000	5,000
79	Վառելիքի բաքի հանում և տեղադրում	8,000	8,000
80	Վառելիքի մղիչի կարգավորում	900	900
81	Ընթացքային մասի յուղում	2,700	2,700
82	Ներծող վառելիքի պոմպի փոխարինում	2,700	2,700
83	Տրամյորի հանում և տեղադրում	2,700	2,700

84	Տրամյորի վերանորոգում	2,700	2,700
	<b>3. Սառեցման և արտաձման համակարգ</b>		
85	Հովհարի փոկի հանում և տեղադրում	3,600	3,600
86	Կոնդիցիոների փոկի փոխարինում	3,600	3,600
87	Հովհարի հանում և տեղադրում	7,200	7,200
88	Ռադիատորի հանում և տեղադրում	10,800	10,800
89	Նույնը կոնդիցիոների դեպքում	10,800	10,800
90	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	10,800	10,800
91	Ռադիատորի վերանորոգում	36,000	36,000
92	Անտիֆրիզի փոխարինում	2,000	2,000
93	Թերմոստատի փոխարինում	16,200	16,200
94	Թերմոստատի միջադիրի փոխարինում	16,200	16,200
95	Սառեցման համակարգի օդհանում	2,700	2,700
96	Ջրի պոմպի փոխարինում	15,000	15,000
97	Ջրի պոմպի վերանորոգում	0	0
98	Նույնը DOHC և V-6 դեպքում	0	0
99	Նույնը կոնդիցիոների դեպքում	0	0
100	Գեներատորի փոկի փոխարինում	3,600	3,600
101	Գեներատորի փոկի ձգող հոլովակի փոխարինում	7,200	7,200
102	Ընդարձակող բաքի փոխարինում	2,700	2,700
103	Խլարարի հանում և տեղադրում	7,200	7,200
104	Նույնը DOHC դեպքում	7,200	7,200
105	Խլարարի զոֆրայի փոխարինում	7,200	7,200
106	Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում	3,600	3,600
107	Կափույրի միջադիրի փոխարինում	10,800	10,800
	<b>4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ</b>		
108	Բանվ. կամ գլխ. գլանի հանում և տեղադրում	7,200	7,200
109	Բանվ. կամ գլխ. գլանի վերանորոգում	7,200	7,200
110	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	36,000	36,000
111	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում	1,800	1,800
112	Կցորդման ճուղակի հանում և տեղադրում	1,800	1,800
113	ՓՏ-ի հանում և տեղադրում	54,000	54,000
114	ՓՏ-ի վերանորոգում	54,000	54,000
115	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	1,800	1,800
116	ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում	1,800	1,800
117	ՓՏ-ի յուղի փոխարինում	2,700	2,700
118	Վազքաչափի շարժաբերի փոխարինում	1,800	1,800
119	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում	2,700	2,700
120	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում	2,700	2,700
121	Նույնը V6-ի համար	2,700	2,700
122	ԱՓՏ-ի հանում և տեղադրում	81,000	81,000
123	Նույնը V6-ի համար	81,000	81,000
124	ԱՓՏ-ի վերանորոգում	225,000	225,000
125	ԱՓՏ-ի համակարգչի նորոգում	27,000	27,000
126	Նույնը V6-ի համար	27,000	27,000
127	ԱՓՏ-ի յուղի գտիչի փոխարինում	13,500	13,500
	<b>5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ</b>		
128	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում	22,500	22,500
129	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում վերանորոգումով	22,500	22,500
130	Բաշխիչ տուփի խցուկի փոխարինում	22,500	22,500
131	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում	10,000	10,000
132	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում վերանորոգումով	15,000	15,000
133	Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում	22,500	22,500
134	Կարդանային լիսեռի միջ. կախցի հանում և տեղադրում	22,500	22,500
	<b>6. Առջևի և հետևի կամրջակներ</b>		
135	Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում	15,000	15,000

136	Առջևի կամ հետևի կամրջ. լիկատար քանդում և հավաքում	20,000	20,000
137	Առջևի կամ հետևի կամրջ. մասնակի քանդում և հավաքում	22,500	22,500
138	Առջևի կամ հետևի կամրջ. կիսասոռնու հանում և տեղադր.	22,500	22,500
139	Կիսասոռնու առանցքակալի փոխարինում	22,500	22,500
	<b>7. Կախոց</b>		
140	Առջևի կախոցի լիկատար քանդում և հավաքում	22,500	22,500
141	Տրավերսի հանում և տեղադրում	22,500	22,500
142	Ձախ կամ աջ հողակապի հանում և տեղադրում	10,800	10,800
143	Անվակունդի շախլկայի և հեղյուսի փոխարինում(մեկ անիվի համար)	3,000	3,000
144	Անվակունդի առանցքակալի փոխարինում	12,600	12,600
145	Անվակունդի փոխարինում	12,600	12,600
146	Յետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	12,600	12,600
147	Ձախ կամ աջ հողակապի խցուկների փոխարինում	7,200	7,200
148	Ձախ կամ աջ հողակապի առանցքակալների փոխարինում	900	900
149	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	7,200	7,200
150	Զսպանակի հանում և տեղադրում	6,300	6,300
151	Զսպակի հանում և տեղադրում	0	0
152	Զսպակի վռանների փոխարինում	0	0
153	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	8,100	8,100
154	Ներքևի լծակի հանում և տեղադրում	9,900	9,900
155	Ներքևի լծակի վռանների փոխարինում	9,900	9,900
156	Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում	5,000	5,000
157	Միջին ձգանի հանում և տեղադրում	8,100	8,100
158	Ճոճանակային լծակի հանում և տեղադրում	6,300	6,300
159	Վերևի լծակի հանում և տեղադրում	9,900	9,900
160	Վերևի լծակի վռանների փոխարինում	9,900	9,900
161	Յետևի վերևի լծակի վռանի փոխարինում	9,900	9,900
162	Գնդե հողակապերի փոխարինում	5,000	5,000
163	Ծայրականների հանում և տեղադրում	5,000	5,000
164	Առջևի կայունարարի հանում և տեղադրում	4,000	4,000
165	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	6,300	6,300
166	Առջևի կայունարարի կանգնակների փոխարինում	4,000	4,000
167	Յետևի զսպանակի փոխարինում	5,000	5,000
168	Յետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	5,000	5,000
169	Յետևի ձգածողի հանում և տեղադրում	6,300	6,300
170	Յետևի երկաթածողի հանում և տեղադրում	6,300	6,300
171	Յետևի կախոցի սայլենտ-բլոկի սպասարկում	8,100	8,100
172	Սայլենտ բլոկի փոխարինում	8,100	8,100
173	Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում	6,300	6,300
174	Յետևի կայունարարի վռանների փոխարինում	6,300	6,300
175	Յետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում	6,300	6,300
176	Անկյունագծային լծակի վռանների փոխարինում	6,300	6,300
177	Անվաբացքի կարգավորում	6,300	6,300
178	Յետևի վերևի գնդե հողակապի փոխարինում	6,300	6,300
179	Յետևի կախոցի գնդե հողակապի վերանորոգում	4,500	4,500
180	Յետևի կախոցի լիկատար քանդում և հավաքում	18,000	18,000
181	Յետևի կախոցի անվաբացքի կարգավորում	6,300	6,300
182	Զողման աշխատանքներ 1 քառ.սմ համար	2,700	2,700
	<b>8. Ղեկային մեխանիզմ</b>		
183	Ղեկային կալունի հանում և տեղադրում	27,000	27,000
184	Նույնը V6-ի համար	27,000	27,000
185	Ղեկային կալունի վերանորոգում	63,000	63,000
186	ՂԿ-ի առանցքակալի և/կամ վռանների փոխարինում	6,300	6,300
187	ՂԿ-ի հողակապերի հանում և տեղադրում	6,300	6,300
188	Յիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում	10,000	10,000
